ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 26 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացի Դավիթ Գալստյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղաքացի Դավիթ Գալստյանը 12.01.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.22-րդ հոդվածով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմողը խնդրում է՝

• ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.22-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին հակասող:

• «Մինչև գործի դատաքննության ավարտը կասեցնել վարչական դատարանի ՎԴ/6338/05/08 վարչական գործով կայացրած վճռի օրինական ուժ ստանալը, հաշվի առնելով, որ սույն վճիռը օրինական ուժ ստանալու դեպքում հարկային մարմինը այն կարող է իմ դեմ օգտագործել դատարանում այն ներկայացնելով որպես ակնհայտ փաստ և դրանով ապացուցված համարել իմ մեղքը և գումարի բռնագանձման պահանջ ներկայացնել, բացի այդ սույն վճիռը դառնում է նախադեպ և կարող է նոր օրինախախտումների պատճառ դառնալ»:

Վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացրել է հետևյալ հիմնավորումները. «Եվ հաշվի առնելով, որ դեռ կան դատավորներ, որոնք չեն ձերբազատվել սովետական մտածելակերպից և իրենց համարում են գործադիր իշխանության մի մասը, գտնում եմ, որ դեռ վաղ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ունենալ 6-րդ հոդվածի նման հոդված, համենայն դեպս այս տեսքով և բովանդակությամբ, որը հնարավորություն է տալիս կայացնել վճիռներ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող»:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.22-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հիմքով, 18 նոյեմբերի 2009թ. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին կայացրած իր որոշմամբ խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված իր իրավունքները՝ իրեն զրկելով օրենքի շրջանակներում պաշտպանվելու հնարավորությունից:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը, ձևականորեն վիճարկելով վերոնշյալ հոդվածների դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Սահմանադրական դատարանը 24.11.2009թ. ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել նաև, որ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրա-

վունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դեպքում դիմումն ակնհայտ անհիմն է:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 69-րդ հոդվածի 7-րդ կետերի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Դավիթ Գալստյանի դիմումի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հունվարի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-2